







Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆ

Handwritten signature
✓

ՀԱԲԵԹԱԿԱՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ



Յ. Ե. Դ. Ե. Դ. Ե.

1926 թ.

[Handwritten signatures and marks at the top right of the page]

[Handwritten signature and number 5734 on the left margin]

Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆ

ՀԱԲԵԹԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՔՍԿՈՒՐՍ)

I

Վերջնելով մեր խնդրի առաջին մասը՝ հարեթական լեզվաբանությունը, մենք պետք է կանգ առնենք զլիաժորապես դրա պատմության, նյութի (լեզուների) և մասամբ հարեթականների կուլտուրական գերի վրա:

Հարեթական լեզվաբանությունը, ինչպես քաջ հայտնի չէ, ուսս պիտանական Ն. Մառի հանճարեղ ստեղծագործությունն է: Ճիշտ է, մեզնից գըրեթե հարյուր տարի առաջ փորձեր են չեղել կապակցություն գտնել վորոշ հարեթական լեզուների մեջ, այն էլ հայտնված լինելով կցկաուր կերպով, ինչպես, որինակ, բասկերենի և կովկասյան լեզուների մեջ, եւրոասկերենի և հայերենի միջ և այլն: Մինչև իսկ 1853 թվին միաք եր հայտնվում, վոր „eine besondere weder indogermanische noch semitische Rasse grosse Gebiete von Vorder—und Kleinasien, Kreta, die Inseln des Ägäischen Meeres und auch das Festland von Griechenland bevölkert habe und in Europa in den oben schon genannten Völkern fortsetzte“*: Սակայն ամբողջն ընդգրկող և լեզվաբանորեն հիմնավորող տեսություն ալել և միայն Մառը:

Հարեթագիտության պատմությունը պիտի բաժանել, մեր կարծիքով, յերկու հիմնական շրջանների՝ մինչև 1920 թիվը և այդ թվից այս կողմը:

Դեռ 1888 թվին Թիֆլիսում հրատարակվող վրաց «Իվերիա» որաթերթում Մառն իր ուսանողական նստարանից իսկ փորձ է անում տալ վրաց և սեմական լեզուների ազգակցության ընդհանուր կողմերը**: Как студент, ашում է Մառը, тогда я не мог рассчитывать на помещение сделанного моего наблюдения ни в каком нном органе в пределах общирнейшей в мире литературы. За ее пределами еще менее можно было рассчитывать на госте-

* A. Kannengiesser, Ist das Etruskische eine hettitische sprache. Programm des Gymnasiums zu Gelsenkirchen, 1908, էջ 4 (տե՛ս Яфет, Сборн., III, 1925, էջ 35):

** „ոցցրոս“, №86, „Զեյնեբա Դա Դոբրեյեբա յարտալուսն ցնոս“:

[Official stamps and signatures at the bottom of the page]

приимство для новой мысли о коренных языках Кавказа, так как никогда к ним в Западной Европе не было проявлено серьезного непосредственного интереса, а кто ими интересовался, даже и профессиональные ученые, в кавказоведении были только дилетантами, худшим видом сотрудников во всяком серьезно поставленном научном исскании, опаснейшими сотрудниками²⁰:

Հաբեթական լեզվագիտությունը, սակայն, չի մնում իր այդ սահման-
յին վիճակում, և 1908 թվին, այն և՛ քսան տարուց հետո, նա ստանում է
իր զարգացման առաջին փուլի համար իր լեզվաբանական հիմնավորումը,
իրեն «плод давнишних изысканий»: Այդ թվին Մառը հրատարակում է իր
«Հիմնական աղյուսակները»²¹, վորտեղ խնդիրն ավելի ընդարձակվում է և
տրվում է հառաջարանի մեջ լեզվական մի հետազոտություն: Այստեղ առաջին
անգամ և հորջորջվում է «հաբեթական» բառը, իրեն ուրույն լեզվաճյուղի
անուն (ըստ Աստվածաշնչի իվերների և միսիսերի ներկայացուցիչները՝
Թուրալ և Կայնը՝ յեղել են Հաբեթի վորդիք): Իսկ այդ լեզվաճյուղի մեջ
Մառը մտցնում է վոչ միայն վրացական խումբը— քարթական, սվանական
և մեկգրկու-ձանական—այլ և բելոռուսների կլամական («սուգական») և
խաղական լեզուները, վորոնք բոլորն էլ ազգակից են սեմականին: Յեթև
ընդունենք ըստ Ad. Ermann-ի, Th. Nöldeke-ի, Broeckelmann-ի, վոր քամեան
լեզուներն ազգակից են սեմականին, այն ժամանակ պետք է ստեղծել, Մա-
ռի ասելով, մի մեծ լեզվաընտանիք՝ «նոյական» (յեթև Աստվածաշնչի գե-
նեոլոգիան պահենք), վորից հաբեթական ճյուղն ավելի ուշ է դատվել, քան
քամյանը:

Հաբեթա-սեմական լեզվական ազգակցության ընդհանուր հիմունքներ
ըր այս են : Հնչյունաբանորեն՝ վարցական խումբը սեմականի նման հայտ-
նաբերում է բաղաձայնների գերազանց զարգացում, մասնավորապես «հա-
ղաղայինների» վերաբերյալ, և հնչափոխական նման յերևույթներ, ինչպես
առաջալեզվային ու հաղաղային հնչյունների փոխանցումը: Ջևարանորեն՝
վրացականում արմատը բնորոշվում է միայն բաղաձայններով, իսկ ձայնա-
վորները հանդիսանում են քերականական կառուցողիներ—հար և նման
սեմականին. խոնարհման ժամանակ վրացականն ուղտվում է նաև «նախա-
վորություններով», ամանյներով, իսկ հոլովների՝ սեռականի ի և արականի
a ցուցիչները, կրավորական անցյալ գերբայների յերևու ձևերը (u, i բը-
նորոշիչներով), գործող անձանց անունների (nomina agentis) և գերբայնե-
րի m նախածանցը,—այդ բոլորն ունի իրեն սեմական նույն համապատաս-
խանները: Բառարմատների տեսակետից՝ մոտ 1000 արմատ վորոշ համեմա-

²⁰ St'a H. Mapp, Уфесич. Кавказ и третий этнический элемент в со-
здании средиземноморской культуры, էջ 8:

²¹ H. Mapp, Основные таблицы к грамматике древне-грузинского язы-
ка с предварительным сообщением о родстве грузинского с семитическими,
С.-Петербург, 1908.

տական հնչափոխական որոնքներով կապակցվում և սեմականների հետ: Մատնանշվում և այդ «Հիմնական աղյուսակներ» ղրքում և հարեթա-սեմական լեզվական տարածայնությունները:

Այս և հարեթագիտություն զարգացման օրաջին հիմնական շրջանը, գոնե մինչև 1908 թիվը: Հետագայում, մինչև 1920 թիվը, մենք տեսնում ենք, վորոշ լրացումներ՝ այլ և այլ լեզուների միացումով (արևադարձային, Գաղղոսական), պահելով, սակայն, հիմնական ղրությունը՝ հարեթասեմական աղ-գակցումը: Այդ լրացուցիչ հետազոտությունները հայտնաբերում են նաև հարեթական վորոշ խմբակցություններ—սիրիանա (s և s ճյուղեր) և սպիրանա, ինչպես նաև լեզուների խաչավորվելը և այլն: Իսկ 1910 թվից սկսած ուսաց Գիտություն ձեմարանի հրատարակությամբ լույս և տեսնում հատկապես հարեթարանություն նվիրված „Материалы по яфет. языкознанию“ սերիան:

Պետք և ասել, վոր հարեթագիտություն իրեն այս շրջանում բավականին զուսպ վերաբերմունքի յեր հանդիպում գիտնականների կողմից. մինչև իսկ Հարձագանգներն սեմալեզուները, վորոնց այս հարեթասեմական աղակցություն ինդիկները ավելի պիտի շահագրգռեր:

Ինչպես վերը մատնանշվեց, Մատն իր „Основные таблицы“ ղրքից հետո ավելի ու ավելի սկսեց խորանալ հարեթական լեզուների ներքին աշխարհի մեջ, նրանց դասակարգման, փոխաղղեցություն, խաչավորման (скрещивание) և այլ յերեվոյթների վրա, ղանց առնելով, կարճես թե, սեմականը, հարեթա-սեմական համեմատական ուղղությունը: Այդ ներքին բուն հարեթական թեքումն ավելի յե յերեվան գալիս սկսած 1911 թվից, յերբ լույս և տեսնում „Кавказ и памятники духовной культуры“ ղիրքը, ինչպես և „Кавказский культурный мир и Армения“ (1915 թ.). մտնավանդ այդ նիշվում և 1916 թվին Սուխումում կարղացած դասախոսություն մեջ („Кавказоведение и абхазский язык“), յերբ հարեթա-սեմական «յեղբայրական» աղգակցությունը Մաուր փոխարինում և «արյունակցականով» (кровное), ավելի հեռավորով: Յեվ նախկին բանաձեվումին—հարեթական լեզուները սեմականի և քամիտականի հետմի ընտանիքի յերեք ճյուղեր են—տրվում և հեռավոր վերադահությունը. «Թերես այդ այդպես և լինի իր ժամանակին, բայց այժմ այնպես և աճել հարեթական լեզուների կազմը, վոր ստիպված ենք ղրանց բաժանել յերկու մեծ ճյուղերի և միացնել մի անկախ լեզվաընտանիքի մեջ—հարեթական»: Այդպիսով, ինչպես տեսնում ենք, հարեթական լեզուներին վերաբերող փաստերը և նյութերը հետզհետե, ինչպես Մատն և ասում, «հեղինակի կամքից անկախ աղան ևն ղնում 1908 թվին հրատարակված օրաջին ընդհանուր կառուցվածքի տակ» «այլ հարարերություն են հայտնաբերում հարեթական և սեմական լեզուների աղգակցության մեջ»*:

* Sht H. Mapp, Яфетич. Кавказ и третий этнический элемент в создании средиземноморской культуры, Лейпциг, 1920, հրր 10, 12.

1920 թիվը պիտի համարել հարեթագիտության համար մի արմատական դարձակետ, մի նոր Sturm- und Drangperiode: Այդ թվին լույս է տեսնում Լալայի գրքում Մառի «Яфетич. Кавказ и третий этнический элемент в создании средиземноморской культуры», վարը հետո է գերմաներեն թարգմանվեց գերմանիստ Ֆ. Բրաունի ընկերակցությամբ: Այստեղ ընդհանուր գծերով արվում է արդի հարեթաբանության տեսական հիմունքները, նրա, այսպես ասած, փիլիսոփայությունը. յերեկան է բերվում հարեթական լեզուների նոր ծագմանությունը և տարածությունը, մարդկային լեզվի տիպոլոգիական բնաշրջումների անդրադարձումը այդ լեզուների մեջ, լեզուների խաչավորման՝ մետիսացիայի բնականոնությունը, հնեարանությունը և մասամբ հարեթականների կուլտուրական գերը: Հարեթական լեզուների բնագավառն էլ ընդարձակվում է շատ հեռուները, ընդգրկելով Առաջավոր Ասիայի, հյուսիսային Աֆրիկայի և հարավային Յեփրոսի վերջերս շրջանները: Հետևապես մեծ տարրերություն ենք տեսնում այս նոր և 1908 թվին ձևակերպված հարեթաբանության փուլերի մեջ. չկա աբգեն «նախալեզու», կընշանակի՝ մերժվում է և «նոյական» նախալեզվի գոյությունը, թեպետ հարեթական և սեմական լեզուները շարունակում են լինել «համարնություն»:

Ընդհանուր բնույթ կրող նոր հրատարակությունները միայն լրացնում և խորացնում են հարեթաբանության այդ ձևակերպումը, ինչպիսիք են— «Яфетиды» (Լենինգրադի «Վոստոկ» № 1), «Из поездки к европейским яфетидам» («Հարեթական ժողովածու», III, 1925, էջը 1—64) * «Об яфетич. теории» («Նոր Արևելք», 1924, V, էջը 303—339): Առկային վերջերս հրատարակված նրա հոդվածը Լենինգրադի հանրային գրադարանի «Արևելյան ժողովածու»-ի մեջ մեծ փոփոխություններ է մտցնում մի քանի խնդիրների վերաբերյալ, ինչպես խաչավորման լեզվական յերեկային գերազնահատումից հրաժարվելը, հարեթական և ուզրոֆինական կամ տյուրկական լեզուների ազդակցությունը և այլն:

* * *

Այժմ դանք հարեթականների տարածմանը և նրանց կուլտուրական գերին: Վերցնենք առաջին մասը՝ տարածումը:

Բուն հարեթական կոլիտսում առաջին տեղն են զբաղում «վրաց» լեզուները՝ հարեթագիտության հայտնադրման այդ գիրպն ու կորիզը: Հետո գալիս է արևմտեղիները, չերեքեղիները («ադրգե»), թուշերները, ինչպես և լեզվիների ու չեչենների լեզուները: «Հայկական» խառն՝ հարեթա—հնդ-յեփրոսական՝ լեզու չէ, կամ ավելի ճիշտ՝ լեզուներ—զրաբարը («բ» լեզու, առաջիկա «հայկական») և այժմյան ժողովրդական բարբառները («բ» լեզու, առաջիկա «արմենական»): Դադատանում կա և խառն հարեթա—տյուրկական տարատարանականը:

* Հոդվածը զբաղում է 1923-թվի սոցոտոսի 8-ին:

Արտակովկասյան հարթավայրի լեզուները բաժանվում են յերկու խմբերի՝ արևելյան և արևմտյան: Արևելյան են շումերական և ելամական լեզուները, Փոքր Ասիայի մի շարք լեզուներ՝ նախալատթյան, Միտաննի, խալդական (նախահայկական), լիդիական, կարիական և այլն: Ամենահնուավորն է վերջինների («բուրիշասկներ») լեզուն, ընկած Պամիրյան բարձրավանդակի վրա: Իսկ արևմտյան խմբին են պատկանում բասկերենն ու իրերերենը, պիկտերենը, ետրուսկերենը:

Մասը իր „Яф. Кавк.“ գրքում սկզբում այն միտքն էր պաշտպանում, վոր վերոհիշյալ լեզուները («արտակովկասյան») ծնունդ են առել Կովկասից, սակայն այդ գրքի գերմաներեն թարգմանությունից մեջ Կովկասի «գաղութարար» կամ ավելի ճիշտ «լիզվատարած» հոսանքը թուլացվում է, և նրա ասելով «հարթավայրերը միաժամանակ ցրված են յերկու ամբողջ Միջերկրականում, Պիրենեյում կամ Իտալիայում վոչ ուշ, յեթե վոչ վաղ, քան Կովկասում» (տե՛ս Հարթ. Ժող., III, էջ 31), կամ ավելի վորոշ— „Яфет. языки, в настоящее время представляющие реликтовые виды доисторического состояния речи первоначального сплошного населения Европы, Африки и Азии, прежде всего Передней Азии, уже давно за трансформацией ее путем скрещивания в разноплеменную речь пидо-европейского типа остаются оазисами по одному живому языку на Пиренеях (и с испанской и с французской стороны), и на Памире и большой группой в весьма сложных разнообразных взаимоотношениях на Кавказе“ (տե՛ս Нов. Вост. № 5, էջ 308):

Հարթականության ազդեցության տեսակետից՝ ամենից շատ յինթարկվել է «հնդյեվրոպական» ալրաներենը, վորի հարթականությունը յերբեմն ավելի ցայտուն գծեր է հայտնաբերում, քան հայերենը. նույն դրությունը կրում է և իրլանդերենը, մանավանդ խոնարհումով և զերանունների ձևական թեքման ժամանակ. այդ լեզուներին ևս հատուկ է հարթական «քսանորդական» թվարկումը: * Հարթական նստվածքներ կան հունարենում և լատիներենում, վորոնց «վոչ հնդյեվրոպականության» վրա շեշտել են Ed. Meyer, A. Meillet, A. Cuny և այլն: Զերծ չեն հարթականություններից և սլավոներենն ու գերմաներենը. վերջինիս նկատմամբ Հայպիդի պրոֆ. Ֆ. Բրաունը գտնում է, վոր դրա «անհայտ» ստուգաբանությունները՝ բառերը՝ վերցված են հարթականից („Die Urbevölkerung Europas und die Herkunft der Germanen“, Berlin—Leipzig, 1922): ** Իսկ ոսկ-

* Ալրաներենի 5000-ից ավելի բառերից միայն 1000—1100 բառեր են վոչ փոխառնված, վորոնցից 400-ից քիչ ավել հնդյեվրոպական են, իսկ մնացած մոտ 700-ը՝ «անհայտ»: Հսմտ. նմանապես ալբաներենի $o > we$ փոխանցումը, ինչպես սլաներենում յով իսպաներենում, վիրջի ո հնչյունի անհետանալը նման բացբիական կամ ծովաթուշերեն հարթական լեզուներին (ալբ. drgwe < dragon драко́н), կամ բառասկզբի բաղաձայնների կուտակումը նման վրացերենին յով այլն, յով այլն (Яс, III 14—15):

** Հրատարակված է „Iaphetische Studien zur Sprache und Kultur Eurasiens“ պարբերականի № 1-ի մեջ:

րենք կամ բրդերենք վերջափ վտարյուն արիական են։ Թողնելով սկսի-
րենի, սարմատերենի և այլոց խնդիրները, իսկ ախոյոզիպան նաև՝ հա-
րեթա-հնդ-յեմրոպական, հարեթա-ուզբոֆիննական և հարեթա-ալուրկո-
մանդոլական աղբրակցությունները, մատնանշենք մի քանի հարեթակա-
նություններ» սեմական հերթայեցերենում։ Այդպես և որինակ, «ստաանա»
բառը, վերը հարեթականում նշանակել և «գայթակզող» («искуситель» =
վրաց «ցղենա» արձատից), Valve Ասածու անունը հարեթականում նշանակել և
«շար վոգի», Eva — «կին»։ Աստվածաշնչի վորոշ առասպելները, ինչպես կնոջ
ստեղծումն Ադամի կողքից, հարեթական լեզվումն ևս բացատրվում, ուր
«կողք-կողք» և «կին» բառերը միահնչուն են, իսկ մարդու ստեղծումը հո-
ղից կամ կավից՝ ըստ Աստվածաշնչի և նման հունական առասպելի Պրոմե-
թեոսի վերաբերյալ՝ նույնպես հարեթականումն են գտնում իրենց պարզաբա-
նումը, յերբ «կավ» և «մարդ» բառերը ծագում են մի արմատից (կց—
կաց կց)։ հարեթական և և հրեական rkia (← rkiak) 'յերկինք', վորը հա-
րեթականում նշանակել և «յերկաթ», հմմտ. երկին, երկիր, երկաթ, վրաց.
რკიბა (ռկինա) 'յերկաթ'։

*
* *

Վերջենք հարեթականների կուլտուրական դերը։

Ըստ Մասի, հարեթական ոտաան յեղել և հիմնադիրը համաշխարհա-
յին կուլտուր ստեղծագործության այն պատմական ոջախի, վորը հայտնի
յի մեզ «միջերկրածովական կուլտուրա» անունով։ Հարավային Յեմրոպա-
յի և Առաջավոր Ասիայի վորոշ շրջաններում արդեն վաղուց և, վոր հնա-
դեաները յերեան են հանել վոչ սեմական և վոչ ել հնդկեմրոպական միցե-
ղի ներկայությունը («յերրորդ եթնիկական տարր»), դրա գիտական հա-
վաստումն ևս տալիս ուսումնասիրության թե հնազիտական, թե պատմա-
դեղարվեստական և թե ազգարանական մոտեցման յեղանակները, վեր-
ջենելով այդ տարրի կենցաղային, հոգեկան և նյութական կերտվածք-
ները։ Ըստ այդ հետազոտությանց՝ յերրորդ եթնիկական տարրը տեսնում
ենք Փոքր Ասիայում և ընդհանրապես Առաջավոր Ասիայում, Միջերկրա-
կան ծովի կղզիների վրա, ինչպես և Բալկանյան և Ապենինյան թերակղզ-
յիների վրա։ նույն յերրորդ կոչված տարրն և և Յեմրոպայի ծայրագույն
արևմուտքում՝ Պիրենեյան թերակղզում։ դա յի նույնպես և Ռուսաստանի
հարավում, Պանասի ափերին, իրեկ Միջերկրականի շարունակություններ։

Ռուսաստանում առաջին անգամն և նիշել այդ յերրորդ եթնիկական
տարրը Վ. Վ. Ստասուլը, վորը դեռ 1872 թվին (Melanges Asiatiques, VI,
1872, էջք 493—593), խոսելով «Վանում գտնված մարդու գլխով և վոտ-
քերով թոչունի մի բրոնզե ֆիգուրկայի մասին», — վորից շատ և գտնված
հնագույն հույն սրբատեղիներում, Ետրուրիայի և Հայաստանի դամբա-
րաններում, իրեկ բրոնզե կաթսաների կոթեր, — գալիս և այն յեզրակացու-

* Դրանց հարաբերության կամուրջ-ողակը հանդիսանում և չուվաշ-
ների լեզուն, վորը Մառը համարում և հարեթական։

թյան, ինչպես Յակ. Իվ. Սմիրնովը և ուրիշները, վոր այդ ֆիզիոլոգիան առաջա-
վոր ասիական ծագում ունի և չի պատկանում վոչ սեմական և վոչ ևլ արիա-
կան արվեստի արտադրությունը. Ստասովը նկատում է զրա մեջ «յեր-
բորդ տարր, ոտար և՛ սեմականին և՛ արիականին» (ՍՊ. Кавк., № 20): *

Արդ՝ յեթև Միջերկրականի այդ յերբորդ տարրը յեղել և հարեթա-
կան, ինչպես վոր Մառն և ընդունում, այն ժամանակ իրոք վոր այդ տար-
րը, ըստ պատմական դերի առաջինը, յեղել և տիյեղերական կուլտուրայի
ստեղծողը, թեպետ Միջերկրական այդ կուլտուրական որրանը չի հանդի-
սացել իրբև միանգամայն ուրույն ու ինքնարավ կուլտուրաստեղծ շրջան,
այլ մի հոտայն և յեղել տիյեղերական միասնական կուլտուր-պատմական
ստեղծագործություն մեջ, ինչպես վոր չեն դատվում իրարից Յեգիպտոսը,
Միջագետքը, Կովկասը, Եգեյտն շրջանը... կամ մինչև իսկ Աֆրիկայի
Կոնգոն ու Ատլանտիդան և Ասիայի Չինաստանը. իսկ գիտնականներից շա-
տերը չեն ընդունում նաև Ամերիկայի մշտնջենապես գատված լինիլը այդ
կուլտուր-ստեղծագործության հանդեպ (հմտ. այդ կողմից նաև կենդանա-
կան աշխարհը):

Յեթև վերցնենք կուլտուրական տեսակետից հատկապես հարեթական
ներքնաշխարհը, մասնավորապես Միջերկրականը և Առաջավոր Ասիան (Կով-
կասը), մենք կը տեսնենք վորոշ շաղկապ զրանց մեջ: Մատնանշելի յե
գնդակախաղը, վորը հատուկ և բասկերին, կովկասցիներին և մինչև իսկ
վերջիկներին, կամ յեղի պաշտամունքը՝ իր վորոշ գծերով Իսպանիայում
կրետեյում և Առաջավոր Ասիայում*): Եգեյան շրջանն իր բրոնզե հիշատա-
կարաններով ցայտուն կերպով աղերսակցվում է Պրեհենյան թերակղզու
հետ: Միջերկրականի և հարեթական Արևելքի կապը հայտնաբերվում է նաև
այնպիսի յերևույթներով, ինչպիսին և, որինակ, թաղման յեղանակը (круг-
ло-купранные погребения—round-barrow men), մատրիարխատը հանդերձ ա-
րյունակցությունից դերձ պահող քաղմայրությունը և տղամարդկանց
«ծննդակատարությունը» (couvade—разыгрывание родов), վերջին կենցա-
ղային յերևույթը մատնանշվում է թե արևմտյան իրերների մոտ (Ստրա-
բոն, III, 4, 17) և թե արևելյան, փոքր-ասիական տիրաբեհների մոտ (Ա-

* Ֆրանսիացի հնագետ S. Reinache հնդեվրոպական թեորիան հա-
մարում է հնագիտության համար մի դժբախտություն: Բերենը յեվ Մա-
ռի խոսքերը. «Индоевроп. лингвистика, мнившая поспроить. п.—е. праязык,
оказалась просмотревшей или недооценившей иррациональные творческие
элементы и в речи и в культуре средиземноморских народов, выводившейся
ею из прародины и.—е. расы и получавшей раз'яснение как наследие расо-
вой природы, как дальнейшее лишь органическое развитие завещанных
природных задатков и.—е. расы. Едва едва допускалось культурное влияние
одной семитической расы (с хамитами), а о третьей еще исторически тогда
неведомой расе, если и возникала мысль у отдельных самостоятельных мыс-
лителей-работников, она замирала бесплодно». (ՍՊետ. Кавк., № 19):

* «Յեղ» բառը հարեթականների մոտ նշանակել և նայել լեզվա-
կան պալեոնտոլոգիայով «շունչ»:

պոլլոն», II, 1013): Աստվածները կաճառը՝ Պանթեոնը՝ ևս կրում և մայրիշխանության սկզբունքի տիրակալությունը, իբրև արտացոլում, իհարկե, մարդկային հասարակարգի: Միջերկրականի և հարևանական Արևելքի նույն կապի մասին և խոսում և պաշտամունքի կենդանիների ընտրությունը, ի մեջ առյալ և այժերը, իբրև տոտեմական չորքոտանիներ, վորոնք մեծ զեր են խաղացել վոչ միայն Կրեթեյում, այսինքն՝ Եգեյան կուլտուրայի շրջանում, ինչպես և արևմտյան Իբերիայում, այլև Արևելքի վորոշ ծովափնյա գոտիներում, ինչպես, որինակ, ափիսագների մոտ («Կովկասյան բասկեր»): Նույն կապի մասին և վկայում և տեխնիկան իր մանրամասներով, ինչպես են ոռնամենտի ձևերը, բրոնզե ֆիգուրները... Դրա մասին և խոսում և ինքը նյութը, վորովհետև ըստ Մաոի, պղինձը, բրոնզը, յերկաթը և թանկագին քարերը հարեթականներն են տարածել Միջերկրականում (Մֆ. Կաֆ. Եջ 40—41): *

Մասնավորապես հարեթական Կովկասի հետ են կապվում ավանդաբար և նախնական կուլտուրայի առաջին նվաճումները՝ կրակը և մետաղը: Հունական առասպելները կուլտուրայի սկիզբը՝ կրակի գյուտը՝ կապում են հարեթական Կովկասի հետ, յերբ Հարեթ հսկայի վորդի Պրոմեթեոսը յերկնից հափշտակում և աստվածների կրակը, վոր կալից և ջրից ստեղծած իր մարդկային կնիքաբանքներին կյանք տա, վորի համար Զևսը նրան դամում և Կովկասյան ժայռից և անգղը կացահարում և նրա միշտ աճող լյարդը, մինչև վոր Հերակլը նրան չի ազատում: Միջանկյալ պետք և ասել, վոր կրակի մետաղագործական նշանակության հետ են կապված և հունալատինական հատուկ անունները՝ Հեփեստոս և Վեստա, իբրև ոջախի և կրակի աստվածություններ. իսկ այդ հատուկ անունները, ինչպես և դրանց ազգակցորեն կապված հասարակ անունները, այն և՛ նյութական կուլտուրայի տերմինները, ըստ Մաոի, հարեթական ծագում ունեն, նշանակելով «լուսավոր, բոց, կրակ, ոջախ և այլն» (Մֆ. Կաֆ. Եջ. 42): Մետաղագործությունը, պղինձը, բրոնզը, յերկաթը հատկացվում և նմանապես ստեղծագործ հարեթական Կովկասին, թե՛ ըստ՝ հունական ավանդությունների և թե՛ ըստ Աստվածաշնչի: Մարդու ստեղծումը՝ նմանապես՝ թե՛ ըստ Աստվածաշնչի պատմվածքի և թե՛ ըստ զուգահեռ հունական նկարագրության՝ հարեթական ֆուլկլորից և վերցված, ինչպես և Աստվածաշնչի տրյեգերաշինություն մասին յեղած էջերը: Յեաջրհեկեղյան ազգացրումը՝ ժողովուրդների առաջին բաժանումը՝ կապվում և Կովկասի հետ, ինչպես և Նոյան տապալնը՝ Արարատ սարի հետ ** (Մֆ. Կաֆ. Եջ 42—43):

* Հարեթականները բերել են այդտեղ յեվ փղոսկրը, վորի անունը, յատին ebur բառը («փղոսկր») հարեթական ծագում ունի, յեվ անկախ հնչյունական տարբերակությունից՝ նա նշակակել և ամենուրեք «ատամ» (տե՛ս Մֆ. Կաֆ. Եջ 41): Մասնաշենք մեր կողմից յեվ ամարի (ποδα) գործածությունը բասկերի յեվ հայերի մոտ, իբրեմ «կերակրանյութ». թուրքերը մեզնից են վերցրել:

** Թեպետ այս խնդրում յեվս ցանկանում են առաջնությունը տալ սեմական աշխարհին, կապելով տապանի առասպելը ասորական «Կարդու» լերան հետ:

Ավերացնենք մեր կողմից նմանապես, թե ինչ մեծ դեր են հաակացնում վերջերս փոքրասիական հարեթականներին՝ խաթերին, վորոնց կուլտուրական երազանսիան իր ազդեցության տակ և առել Իրանը, Միջագետքը, Եգիպտոսը, Անգլիոսիկոսը և մինչև իսկ հարավային Ռուսաստանը, ինչպես վերջինիս նկատմամբ ցույց և տալիս Բ. Ֆարմակովսկին («Архангелский период в России» գրքում), Գ. Բորովկան և մյուսները: *

II

Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Հարեթական լեզվագիտության պատմությունից, նրա նյութից—լեզուներից և հարեթականների կուլտուրական դերից հետո՝ մենք կաշխատենք տալ և Մասի աշուպես կոչված տեսությունը՝ թեորիան, նվիրված ընդհանրապես լեզվաբանական (գլոտոլոգիական) խնդիրներին, ինչպես՝ լեզվի ծագումը, զարգացումը իր տիպոլոգիական բնաշրջումներով, թեքումը «մասունք բանի»-ներով, իմաստաբանությունը և մասամբ լեզվական մտածությունը՝ աշխարհայացքը: Սրա մեջ և մտնում և լեզվի խաչավորման յերևույթը, վորը այնքան շեշտվում և Մասի կողմից:

Պետք և առել նախապես, վոր հարեթական այս ընդհանուր տեսական մասը դեռ վերջնականապես մշակված չի կարելի համարել և շատ խնդիրներ նորանոր շտկումների և փոփոխությունների յեն յենթարկվում: Այդ չի ժխտում և ինքը հեղինակը, յերբ խոսելով լեզվի ծագման մասին, գրում և. «И вот яф. языковедение не только утверждает о таком положении дела в длинном, очень длинном ряде случаев, но и разъясняет его уже сейчас при наличной, пока разумеется, не законченной разработанности теории» (տե՛ս Ուո. Վոստ. № 5, էջ 313—314):

Գալով տեսական այդ մասի նկարագրությունը, նախ կանգ առնենք լեզվի ծագման, ավելի ճիշտ, նրա սկզբնական գրության վրա: Մտքը չի ընդունում «նախալեզու»: Յեղի և միայն «переживания разнообразного язычного состояния», «зачаточные разновидности», «языки-примитивы», այսինքն, տիպոլոգիապես կամ կոնստրուկտիվ տեսակետով մարդկային լեզուն յեղի և իր ծագման՝ «մարդկայնացման»՝ շրջանում միասնական (единый), սակայն միևնույն պատկերացումներ կամ գաղափարներ արտահայտող տարրեր հնչյունների ընտրությամբ նա ևր միաժամանակ և բազմադան. և հետևապես իրենց իսկական իմաստով լեզուներ յեղի և սկզբում շատ և վաղ թե մեկ (Կփ. ՏՃ. III, էջ 31): Սկզբնական անտեսավարական համայնքների և կլանների միավորվելու հետևանքով առաջ և գալիս և մեր աշխարհի իմաստով «լեզուն», վորի այդ կերպ կազմավորումը, սակայն, գլուխ և գալիս միայն աշուպես կոչված «խաչավորման» (скрепление) միջոցով: «Նախա

* Տե՛ս «Хетты и хетская культура», проф. Бороздина и др.

агглютинативном строе, круг флективного состояния, что у яфетидов даже в наиболее совершенном флективном типе наблюдается еще живучесть агглютинативности и даже аморфности типа».

Ազգությունատիվ շրջանից շատ ածանցներ (նախ—և վերջածանցներ) արտացոլում են ցեղային կամ ընտանիքի տերմիններ, և «խոսքի ձևարանությունն արտացոլում է հասարակարգի ձևարանությունը»: Մասնավորապես վերջ patronimica և մարմնի վերաբերյալ գոյականներ դարձել են ուսանողական, ինչպես, որինակ, «հայր» և «մայր» նույնանունները կամ «քույր» և «յեղբայր»-ը դարձած են գործող անձանց ձևեր (nomina agentis). հմմտ. ըստ իս «որդի»-ն՝ դնորդ, անցորդ, որսորդ և այլն բառերի մեջ: «Յերեխայք» («վորդիք») տերմինը դառնում է կամ հոգնակի թիվ կազմելու ձև և կամ սեռական հոլովի և վորդիչի ձև *։ Սինտետիկ շրջանի այն բառերը, վորդնք մարմնի մասերն ելին նշանակում, հետագայում դառնում են նախդիրներ կամ հետադիրներ, ինչպես, որինակ, «ճակատ» «աչք», «քրիթ», «ձեռք», «կողք», . . . տերմինները դառնում են «հառաջ», «մոտ», «միջոցով» և այլն (Яф. Кавк. հջք 24—26): Անունների հոգնակի թիվը նախնական բնականոն կացությունն և նախապատմական մարդը միայն յերկար աշխատանքի պրոցեսում հասավ յեղակի առարկայի ըմբռնմանը, իսկ ավելի ուշ՝ յուր անհատի ըմբռնմանը, հոտից դուրս՝ իրեն յեղակի թիվ:

Միջանկյալ պիտի ասենք, վոր հարեթա-սեմական ազգակցություն տարրերը Մառք բացատրում է այդ լիզուների նախկին՝ ազգությունատիվ՝ դրություն ընդհանրություն, վորից, իրեն սոցիալապես և հոգեբանորեն արդեն անցնող շրջանից, դրանք ստացել են իրենց հետագա ձևավորումը և զեմքը:

Տիպոլոգիական փոխանցումների արտացոլումը տալիս է նաև թեքումը, յերբ հոլովող բառը անձև (аморфно) է և հոլովում է նրան արվող դերանունը, իսկ մյուս կողմից—վերջավորությունները որդանապես միացած են բառին, թեպիտ այդ վերջին զեպքումն էլ, ինչպես վրացերենում, դերանվանական հոլովումը յուր մնացորդներն է պահում: ** Բայց առանց դերանվան չկա և խոնարհում և առհասարակ բայ, վորովհետև բառի սուկական բնին կամ ձևույթին վորոշ ձևանիշների և հատկապես դերանունների

* Показатели множественности вышли из слов, означающих „дети“, по первично эти же слова означали „племя“, притом каждое такое функциональное слово, обращавшееся в один функциональный согласный, означало определенное „племя“ (Нов. Вост., № 5, հջք 309—310):

** Такого положение и в отношении состава корней. Трехсогласное корня, наблюдаемое в яф. языках, как в семитических, оказывается результатом восприятия 3-ого функционального согласного, как корейного, часто тот же трехсогласный корень у яфетидов в одном и том же языке по-является в цельном виде слова в составе всего двух согласных. 3-րդ բաղաձայնը հոգնակիի նշանն էր:

րի համեմատով և, վոր ստացվում է գործողության կամ դրություն հնչյունական զգացումը, և հատկապես գերանվանական տարրերը ունեն վոչ միայն ֆունկցիոնալ դեր խոնարհումը հայտնաբերելիս, այլ և կոնստրուկտիվ բայի կատեգորիաների իսկ համար: Թեքման ձևական աղբյուրը գերանունն է, առանց վորի չի ստացվում վոչ հոլովում և վոչ էլ խոնարհում: Հատկապես նիշելի յև հարեթական գերանունների այդ ձևարանական կողմը տիպոլոգիական շրջանների փոխանցման ժամանակներում:

Հարեթական լեզվաբանության տեսական մասին պիտի կցել և սեմանտիկան իրեն հնկարանական՝ պալեոնտոլոգիական հատկացողությամբ: Ծանրության կենտրոնն և այստեղ բառերի ներքին բովանդակությունը, իմաստական-նշանակության կողմը, վորը արտացոլում է յուր մեջ այլևայլ նախապատմական դարաշրջանների հասարակական և կուլտուրական կյանքը, զլխավորապես՝ իրեն ազգաբանական և կրոնական ապակերցեպլալով: Այստեղ, կարելի չի ասել, հայտնաբերվում է նախնական լեզվային մտածություն և հոգեբանություն, յերբ սեմանտիկան ու խոսքի հոգեբանությունը բղխում են մարդկային հասարակարգից, սոցիալ-տնտեսական պայմաններից, և յերբ բառաստեղծման համար հաջորդում են տրիպերական-տարերային, էթնիկական-տոտեմական, դասակարգային և պատմական դարաշրջանները: Ինչպես Մառն և գրում. „Значение слов в те эпохи это отложение не физического, а общественного восприятия мира, в эпоху первотворчества человеческой речи—космической общности“ (ЯС, III, 1925, էջ 26), կամ Թե.—„язык не только орудие исторической общности, но он создание до-исторической и протоисторической общности. Потому в самых формах грамматических категорий язык отражает строй общности тех далеких творческих эпох. Тем яче это замечается в развитии значимости слов, семантике“ (Нов. Вост. № 5, էջ 316):

Յեթև վերցնենք «մասունք բանիսները, կր տեսնենք, վոր դրանք նախնական դարաշրջաններում չեն յեղել և հետադալումն են ծնունդ առնում, զուգորդվելով վորոշ նյութական կամ թանձրացյալ գաղափարների հետ, ինչպես են մասնավորապես թվականները և բայերը:

Թվականների «մեկ» ու «յերկուսը» նույնանման են «(մի)ձևք» և «յերկու կամ զույգ ձևք» բառերին, «չորսը» հավասար է «վոսքեր» բառին, հավանորեն նախնական այն պրիմիտիվ ըմբռնմամբ, յերբ ձևքերն ևս վոսքերի գեր են խաղացել, կամ վերցնելով կենդանիներից, իսկ «հինգը» նույնանիշ է «բոունցը-հնգյակին»։ «տասի» գաղափարը տալիս են յերկու ձևքերի հնգյակները (Иф. Кавк., էջ 25): Բայց թվականների դարգացման և անվանակոչության վրա մեծապես ազդել են և կոսմոգոնիական նյութական տվյալները, յերբ յերկինքը իրրե կենդանի էյություն պատկերացում է ստանում հանդերձ համաստեղություններով: Յերկինքը իրեն տարածական ասպեկտով յերեք մակարդակի յև բաժանվում վերին, միջին (վորն և յերկրի մակերևույթը) և գեհենյան կամ անդնդային յերկինք

(«Ջրային»), վորտեղից և «յերեքի» դադափարն և ծնունդ առնում. հարեթական լեզվում «յերեքն» ու «յերկինքը» համահնչուն են^{*}: Իսկ յեթե յիլնենք հարեթական պալեոնտոլոգիայի այն մեկնումից, վոր «յերկինք» բառը ծառայել և սկզբում վոչ միայն «շրջան-տարածութուն», այլև «շրջան—ժամանակ» (=ժամանակաշրջան), «տարի» դադափարների համար, մենք կը տեսնենք, վոր մինչև վեցը թվերի դարգացման հանդեպ մեծ նշանակություն և ունեցել «յերկինք—տարի» ըմբռնումը, ինչ չափով վոր հարեթականների մոտ մեր տարին բաժանվել և յերկու վեցամսյան տարիների՝ «ձմեռային տարի» կամ «ստորին յերկինք—գեհեն» և «ամառային տարի» կամ «վերին յերկինք», «ֆիրմամենտ»:

Բացի «յերկինքներից» իրենց տարածական և ժամանակի ասպեկտներով թվականների կյանքի վրա ազդել են և համաստեղությունները գտնականների կերպարանացումով կամ մարմնացումով, համաձայն նախապատմական մարդու պատկերացումների: Ազդել են նամանակա հարեթական 5 կամ 7 հիմնական ազդերը իրենց առտեմներով ի դեմս այլ և այլ զազանների կամ յերկնային լուսավորների և մինչև իսկ յերկինքների, իսկ այդ ազդերը իրենց հերթին կրել են համաստեղությունների անունները: Թվականները, վորպես խոսք (речь), ցեղերի և իրենց լեզուների խաչավորման հետևանքն են, քանի վոր քաղաքակրթություն այլ տեղմիներից ներանք ավելի էյին փոխեփոխ առնելում, իրեն շփման և ապրանքափոխանակության ամենակարևոր գինք, թողնելով իսկ նրանց կախարդական կամ մոգական նշանակությունը, վոր կապված և «յերկինքների» հետ: (ՄԸ, III, էջ 29, 30): Թվականների քառորդական թվարկումը, ինչպես ասվել է, հատուկ և յեղել հարեթականներին ($30=20+10$, $40=$ յերկու քսան, $50=$ յերկու քսան և տասն...):

Բայերը, խոսքի մասերի այդ ամենավերացականը, իրենց սաղմնավորման շրջանում նույն գոյականներն են, վերցված այլ և այլ անուններից (մարմնի և այլն), ինչպես «ականջ», «ձեռք», «ճարպ» և այլն, և այլն:^{**})

Գալով բառերի քանակի և խմատի պատմությունը՝ մենք տեսնում

^{*} Այդ կողմից հնդ-եվր. *treye—«три» թվականը Մառը կապում և «ծիր, վրաց. «ծրև» ԳՐԴ» բառերի հետ, իբրեւ «(յերկնային) շրջագլիծ». սեմիտների վորոշ թվականներ յեվս հարեթական ծագումով են (հմմտ. մեր «կես» յեվ «հարյուր» հաբեթ. թվականները): Հմմտ. ետրուսկ. kiw, '3', ուտիական gib, '3' յեվ մեր «քիմ(ք)» ,Hēdo'...=սիրիլանտ sami ,3'...:

^{**} Որինակ, վրաց խոսն—|| խսլ—|| խսլ—արմատը, վոր նշանակում և 'հիշել, հիշատակել', սկզբում նշանակել և «ականջ» (հմմտ. արաբ. «ուձն» 'ականջ') յեվ որինսկ «մա-խսով-ս»=ինձ ականջ կա. կամ «ճարպը» իբրեւ մարմնի պարուրվածք տվել և «հագնելու» զադափարը—վրաց «ա-ցվի-ա», վոր. նշանակում և 'հագած ե', տառացի նշանակել և 'նրա վրա ճարպ կա': Մինչևի իսկ վերացական «լինել», «ունել» բայերը այդ ծագումն ունեն (տես ՊՓ. Кавк., էջը 26, 98):

ենք, վոր հարեթական լեզվաբանությունը հնարավորություն է ընձևում յուր հարուստ բառապաշարը հասցնել «նախալեզվական կացություն» սկզբնառից բառերի սահմանափակ թվին, յերբ այդ պրոտոռիպ բառը առաջանում էր միշտ ֆիզիքական կամ նյութական արդյերցնայցիայով և ծառայում է տասնյակ տարրեր նշանակությունների համար, վորոնք մեր տեսակետով թե նյութական և թե հոգեկան են, սակայն նախապատմական դարաշրջաններում այդ տարրերացումը չկար:

Մասնավորապես, որինակ, յեթե վերցնենք կոսմոգոնիական-տարերային բառաստեղծագործությունը ազդյուրը, տեսնում ենք, վոր ամեն մի ցեղ յուր մտայնություն այդ հնագույն շրջանում յեղնում է այն պատկերացումից, վոր յերկինքը նախ կենդանի էություն է, իրրե հոմանավոր՝ այս կամ այն գաղանի կերպարանքով, և հետագայում դառնում է ցեղական-ազգային աստվածը, վորը միաժամանակ և ցեղի անունն է, իրրե նրա տոտեմը. յերկրորդ, այդ յերկինքը, իրրե կենդանի էություն, հատուկ է յերեք մակերեսների՝ վերին (մեր «յերկնային»), ստորին կամ միջին (մեր «յերկրային») և ստորյերկրյա կամ անդնդային («ջրային»): Այստեղից է ահա սկսվում գաղափարների մի ամբողջ շարան, վորոնք յերկինք անունն են կրելիս յեղև իրենց ծագմարանությունը, ինչպես «կամար», «կամուրջ», «աղեղ», «քիմք», — «աշտարակ», «միջնաբերդ», «քաղաք», «տաճար» — «շրջան», «ծիր», — «ժամանակաշրջան», «տարի», — «յերեք», և այլն, և այլն: Մենք արդեն նիշեցինք, թե ինչ մեծ ազդեցություն է ունեցել յերկինքը յուր համաստեղություններով թվականների դարգացման վրա: Բացի այդ, հարեթական հնարանությունը պարզում է, վոր նախապատմական հարեթականների պատկերացումով ամենամեծ աստվածն է յեղև «յերկինք-ջուրք»-ը (— «небеса-вода»), սկզբում «քառս» և «յերկինք-ջուրքը», իրեն «ջուրք» ասակետով նշանակել և միշտ «կին» գա յե և ցեղի անունը (ՅՈՒ. III, Լժք 20, 27, 37):

«Ջեռք» հասկացությունը ծառայել է մեկ, յերկու, հինգ, տասն թվականների պատկերացումների համար, ինչպես վերևում հիշվել է, բայց նա ավել և հետևյալ նշանակությունները. — «կարողություն», «իշխանություն», — «իրավունք», «պարտականություն», — «վոդորմություն», «շնորհք» — «հարուստ», «ուժեղ», — «կողմ», «յերկիր» (сторона — страна), — «նեկուկ», «ոգնություն» — «նման», — «միջոցով», — «մինչև», — «բանել», «պահել», — «ստանալ», — «տալ», «հանձնարարել», — «հանդուրժել», («կրել»), — «հալթել», և այլն և այլն: Իսկ յեթե վերցնենք «ձեռք» բառի «կարողություն» իմաստի ածանցումները, կտացվեն նաև — «իշխանավոր», «վարիչ», «իշխան», «թագավոր» և եթեթուլությունը կրոնի պատկերացումով նաև «աստված», վորը և համապատասխան ցեղի անվան համար է ծառայել: *

* Մտոր նախարիական Հայաստանի «խալդ» աստուծո անունը յեղ «խալդ» ցեղի անունը սերում է «ձեռք» գաղափարից:

հետևյալ միանվանությունների մեջ—«յերկինք», «գետին», «կենդանի», «ծառ», «ստաղ», «գուշակություն» կամ «անաղ», «լույս», «կայծ», «միտք», «արդարություն», — «յերկինք», «սար», «գլուխ», և այլն, և այլն:

Ի հարկե, բառը յուր այդչափ աշխարհային նշանակությունները ստանում էր կենդանի խոսքի մեջ, «կոնկրետ գործածությունը», ուր բառի սարքերը նշանակությունների ճիշտ ըմբռնելու համար ելական դեր է խաղացել միմիկան և գլխավորապես ձեռքը՝ ժեստը, նմանապես ձայնի բարձրացումը կամ իջեցումը, հնչյունների յերկարացումը կամ կարճացումը, ինտոնացիան և այլն:

Սեփանտիկայի «ազգաբանական» կողմը ևս միծ դեր է խաղում հարեթական լեզվաբանության մեջ, յերբ ազգ—ցեղի անունը անդրադառնում է դասակարգերի, տեղանունների, մետաղների, տոտեմների՝ սրբազան առարկաների մեջ:

Դասերի (сословие) անունները, ըստ Մառի «մասնավոր դիտողություն», ծագում են ցեղերի անուններից, յերբ զբանք խառնվում են արվյալ ժողովրդի մեջ: Լատիներեն *plebes*՝ «պլեբեյ» սոցիալական տերմինը հարեթական ձև է (հոգնակի)՝ հավասար պեղատդին կամ հթրուսկին, և, հետևապես, պլեբեյական դասը ծագել է պեղատդ կամ հթրուսկ ցեղից: Վրացերենում «գյուղացի» բառի անունը—«գլխի», վորը նշանակում է և «ճորտ», ծագել է կոլխերի անունից, և հետագայում այդ «ճորտ, գյուղացի» տերմինից առաջանում է վերին խավերի ըմբռնումով «գլխա, գլխակի» իբրե «վատ»: * Այդ «գլխի—ճորտ, գյուղացի» սվանական ձևից վերցված է և հայոց «գոհնիկ»-ը: Մասնաշենք մեր կողմից և Ադոնցի ցույց տված լեզվական-սոցիալական կապը «մշակ» ու ժոտիկների (մեթեւորի) մեջ կամ «սամիկ» և արամեաների մեջ **,—հմտ. նմանապես և «խուս» (ստարազգի, բարբարոս), «խուսան» և «խուսիկ»-ը՝ Սուսանաանի ժողովրդի անունից վերցրած:

Ցեղական անվան անդրադարձումը տեղանունների մեջ բազմաթիվ օրինակներ ունի Բերենք մեկը: Վերցնելով *Eras-q* || *Aras-q*—*Eras-t* || *A-ras-t*, —**E-ras-n* || **A-ras-n*, —**E-ras* **A-ras*, —*Uraui-t-u* (> *Urartu* > *Ararat*), —*eras-to* || *a-ras-to*, —*Erasgavorg*.. տերմինները, Մառը գալիս է այն յեղրակացության, վոր Ախուրյանի և Արաքսի ավազանը հնում բնած էն յեղի «սասերը» կամ «սաշերը» (տե՛ս „Надписъ Сардуръ II...“, էջ 6—19), կապիով այդ ցեղը յեղրապական *rasen*-ների կամ Լարուսկների հետ:

Համեմատիւր այդ «ցեղ» > «հետ» անունների տեսակետից նուս—շհշ:

* Տե՛ս „Нов. Вост.“ № 5, էջ 316.

*** *Ram-ik* և *«mak»* ^{մէք} ^{moskoi} ^{moskoi}, повидному, эпонимы аборигенов Armenioi յեղ *Kolxoi*, которые были покорены и подчинены пришлым элементам и вследствие этого, их имя получило такое значение... Слово *gréh-ik* соответствует груз. *glexi* и одного с ним происхождения“ (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 436):

«Բիոն» և «Բըզ-իբ» գետերը baz- ցեղանվան հետ, վորը զ (g) հոգնակի նշանով տալիս և * a-bas-զ (հուն. Αβασζος), վորից և դրափոխությունով վրաց «ափիսազ»-ը. կամ թե KəZZə: և թնիկական ձևը, դառնալով իվի-րա՛նում («շ» խմբից) * koroq, տալիս և հնչափոխությունով «ճորթիս» գետի անունը. հմմտ. sequani ցեղը և Seine «Cena» գետը Գալլիայում (ՊՈ. III, 41—42):

Ցեղական անունը, կրելով այդ ցեղերի տոսեմների՝ սրբազան առարկաների անունը, մասնավորապես, որինակ, անցնում և և մետաղներին: «Իբեր» ցեղը, վորը յեղել և թե Միջագետքում, տալիս և յուր անունը «պղնձին», և թե Պիրենեյան թերակղզում, տալիս և յուր անունը «պղինձ» = հայ. «պղինձ» = պարսկ. birinj (բիրինջ) և այլն, վորոնց հետ Մաուր կապում և բրոնզի անունը (branzo). Հատ գիտնականներ սիրում են այդ բառը խառնական Brundisium քաղաքի անունից (տես ՊՈ. Кавк., էջ 51), ինչպես վոր Միջագետքի հիբերներին են վերագրում պղնձի տարածումը Միջերկրականում, յերբ այդ ցեղը Կյուպրոսի վրայով գաղթել և Պիրենեյան թերակղզի (հմմտ. sumer > Humer > Kuper, վորից և գերմ. Kupfer, ֆր. cuivre և այլն), թեպետ սուսերների և հիբերների (Sumer > Hiber) ազգակցությունը բացի նյութական կուլտուրայի պատմությունից զրոհորվում և նաև հարեթականությամբ *:

«Իոն» հարեթական ցեղը, վորի անունը տեսնում ենք հոների, հույների, հայերի (Հայն—), հենիոխների, սոն-ավանների մեջ, յուր տոսեմն և ունեցել «յերկաթը» կամ «ձին», նույնանման դառնալով վերջիններիս հետ. Կովկասի բոլոր հարեթականների մոտ ձիու անունը կրում և այդ ion բունը: Թեպետ յերկաթի տարածողները Յեզրուպայում յեղել են կելտերը սեմիտ փյունիկեյների միջնորդությամբ, սակայն, ի նկատի ունենալով, վոր Խորուսկներն ել դրան անմասն չեն, ինչպես հնագիտական ավյալներով և յերևում, Մաուր խնդիր և հարուցում ընդհանրապես հարեթականների մասնակցության մասին այդ գործում, մանավանդ վոր միկենյան կուլտուրայի բրոնզե ժամանակաշրջանի հաջորդողները յեղել են հույները, վորոնք, բոտ Մաուր, եթնոլոգիապես և մասամբ լեզվապիտոբեն հիբերիկներ են (հույների վաղ հելլենյան՝ պելասգյան՝ ծագում ունենալու մասին խոսում են Հոմերոս, Հերոդոտ, Եստիլ..., տես ՊՈ. III, էջ 51): Վրացիներում «երեմեն» (այսինքն՝ հույն) բառը Մաուր համարում և յերկցեղյան անուն, առաջացած

* Այդ Sumer > Hiber > Ber ձևափոխությունից առաջանում են «իվեր», «վիր», «եզեր» (Հեզվեր), «գուրիս» յեվ այլն: Մատերիալ կուլտուրայի տեսակետից իբերները, բոտ անգլո-գիտնական Wels-ի (The Outline of History, էջ 91) կազմել են «նեոլիտական [միջերկրական ուստ]», վորը բասկերի, կովկասցիների, դրավիդների, շումերների յեվ մոնղոլների հետ մի խմբի յե պատկանում, իբրեմ «ելիոլիտական կուլտուրայի կրող» (ՊՈ. III, էջ. 52):

iber և ion անուններից, ինչպես «սոմխի» (հայ) բառը՝ son և mes-q ցեղերի անուններից, այսինքն, «իբեր-սոն»-ը դառել և «բերձեն», իսկ «սոն-մեսխ»-ը (< խոնորակ)՝ «սոմխա»։ հմմտ. յերկցեղյան նման կազմված՝ «եղերովանք», «արմենո-խալիբներ», «ՄՈՆՏՐՈՆՔՆԵՐ» * Բասկերենում կա bur-din «յերկաթ», ինչպես և беру «олово» և бер-um (հմմտ. վրաց «բր-պենի» «олово»), Թերևս և իոնների տոտեմական աստվածը γαῦνα և γαῦνα «տեր», Աստված բառերի մեջ: **

Ֆեդական անունը հարեթականների մոտ գործադրվել և նաև «խոսել» բառի համար, իբրև տոտեմ կամ էթնոնիմ, վերոգնահատված դրա համար հատուկ տերմին չկար և ամեն մի հարեթական ցեղ «խոսելու» համար յուր ցեղական անունն էր գործի դնում։ ստացվում էր այն, իբր, ինչպես Մառն և ասում. — „новянин или ион ‘понит’ ибер ‘пберит’, этрусск ‘расенит’, скиф ‘скифит’, ҫаруҫи и т. д.“ (ЯС. III, էջ 50):

Մառը յուր ազգաբանական պալեոնտոլոգիական ստուգաբանություններով հաճախ հանդուս է, ըստ իս, անհեթեթությունների և nonsens-ների։ Որինակ, հենց վերոհիշյալ «տոտեմական բայերի» գործածությունը նա տեսնում և ամենուրեք և շարունակելով խոսել «խառնված» լեզուների մասին, նա գրում է. „Так, переводы палеонтологически глаголы со значением ‘речи’, древние грузины ‘расенят’, и ‘скифят’, новые грузины ‘скифят’ и ‘ибериат’, мегрелы ‘пберят’ и ‘скифят’, армяне ‘понят’, ‘расенят’, ‘ибериат’, ‘сарматят’, халды в ванской клинописи ‘сарматят’ или ‘албанят’ баски ‘расенят’, ‘пберят’ и т. д. и т. д. (ЯС. III, էջ 50)***: Կամ Թե, որինակ, յերկցեղյան էն („двуплеменное гибридное образование“) այնպիսի պարզ բառեր, ինչպես վրաց «գրձելի» (=յերկար) և «ցխովելի» (=կենդանի), «ցխովարի» (=ոչխար), վրոնք առաջացել էն «զուր» (> «զվեր») + «ձել» և «ցխո» || «չխո» + «վել» || «վար» անուններից (տես Н. Марр, грам. др. груз. языка, էջը VI—VII): Անընդունելի յի ամեն ինչ վերածել «եթ-նիկական—տոտեմական» ընդհանրակուլ հայտարարի, անցկացնել ամեն ինչ դրա բովից:

* * *

Հարեթական լեզվաբանության տեսական մասի կարևոր խնդիրներից և նաև այսպես կոչված «խաչավորությունը» (скрепление),—մի տերմին,

* „Мешанное племя из сванов и колхов, по Птолемею“ (І. Кипшидзе грамматика мингр. яз. էջ XXIII):

** Մառը զրանց հետ և առնում յեվ ալբանական per-ond ‘бог, господь’, յեվ հին ուղտաց перкун-ը յեվ այլն (տես ЯС, III, էջ 58):

*** Այդ նա շարունակում է յեվ հնդ-եվրոպացիների ու սեմիտների վերաբերյալ, ասելով— „греки ‘понят’, ‘расенят’, латиняне ‘расенят’, римские народы ‘скифят’ и ‘пберят’, славянские ‘скифят’, ‘пберят’, иранцы ‘скифят’, как из семитов ‘пберят’ еврей, равно сирийцы, и ‘сарматят’ или ‘албанят’ если не ‘пберят’ арабы и сирийцы“ (ib. 51):

վորը ինչպես և «պալեոնտոլոգիան» վերցված և բնագիտությունից, ուր դրա տակ հասկանում են «տարբեր սխառմատիկ խմբերի պատկանող արուի և եգի գուգավորումը»²⁰։ Հետևապես, լեզվաբանություն մեջ այդ «խաչավորման» տակ պիտի հասկանանք տարբեր լեզվական սխառմաներին պատկանող յերկու միավորների ձուլում՝ կոնտամինացիա։

Հնդ-յեվրոպական լեզվազեղաներից այդ յերևույթի վրա կանգ են առել հատկապես Միլլերշիլդը, Ասկոլին, Շուխարդադը և մասամբ Բոգուսև-դև-Կուրաևենեն²¹, յեթև չը հաշվենք պատահական դիտողությունները Բրեալի (իրեն շատ աշխատությունց մեջ) և մանավանդ կելտագետների, ինչպես Խոնս-ի, թեպետ, պետք և ընդգծել, ինչպես ճիշտ նկատում և Ա. Գենկոն (ԿՏ. III, էջ 121), վոր այդ լեզվական յերևույթի գենետիկական արժեքը հաճախ ավելի յե զգացվում այն մարդկանց կողմից, վորոնք ազատ են հնդեվրոպական տեսարանություն վատ ազդեցություն ունենալովից։

Անվանելով ազգակից լեզուների (բարբառների և այլն) խաչավորումը մետիսացիա, իսկ վոչ ազգակիցներինը՝ հիրերիզիզացիա, Մառը այդ խաչավորման յերևույթին տալիս և, այսպես ասած, արմատական նշանակություն կամ ինչպես ինքն և ասում. — „афетическое языкознание вынуждено поставить в главу угла о происхождении речи и возникновении ее типов и различных языков учение о происхождении языков от крещения“ (ԿՏ. I, էջ VI)։ Գտնելով այդ յերևույթը «բնականն», և մինչև իսկ «անհրաժեշտ» (ԿՏ. III, էջ 49), նա ասում և նույնպես, վոր այդպես բոլոր լեզուներն են մեզ հասել այլ և այլ աստիճանի խաչավորման ընթացքով (Ղփ. Կաւ., էջք 15—16)։

Յերկուստայական խաչավորման («հիրերիզիզացիայի») տիպ հանդիսանում և, որինակ, հայերենը, իրրև հնդեվրոպական և հարեթական տարբեր ընտանիքներին պատկանող յերկու միավորների ձուլում, կամ տարասարանական լեզուն, իրրև հարեթական և տյուրկական լեզուների խառնուրդ. իսկ միջհարեթական խաչավորյալ («մետիսացած») լեզու յե, որինակ, սփաներենը, իրրև «շ» (s) ճյուղի և սպիրանտ ճյուղի ներկայացուցիչների խառնուրդ։

* Гольдшмидт. Основы учения о наследственности, СПб, 1913, стр. 217 (ԿՏ. II, էջ 121)։

²⁰ Ավերորդ չիք լինի այս ծանոթություն մեջ բերել Բոգուսև-դև-Կուրաևենյի մի բազմաժրդ ուռաաց լեզվի Կյախատայի բարբառի շարանյություն վերաբերյալ. նմուշներ—Илисандера, за тибн кака подумаи, за моя пришел еса?—Погули еса, господине Далай. Почето за ваша женушеки сюда походи ниту? — Закона ниту: за его помешай поторговай буду“ (Աղերսանդը, ինչ ևս կարծում, յես ինչու յեմ յեկել.—Հյուր, պ. Դարայ.—Ինչու՞ ձեր կանայք այստեղ չեն գալիս.—Որենքն արգելում և, վորովհետև իրանք կր խանգարեն ասեկտուրը). տե՛ս նրա դասախոսությունը „Лингвистика“, հրատարակած Ղազանում 1879 թվին։

Հայաստանի Խ. Ս. Հ. ՊԵՏ. Համալսարանի գիտական խորհուրդի

Այս առթիվ պետք է հիշատակել նաև, վոր այսպես կոչված «փոխառությունները» ի նկատի չեն առնվում, յեթև զրանք մտնում են արհեստական ճանապարհներով՝ դպրոցի, պետություն, զրուցություն և այլն: Մասի կողմից փոխառությունները (заимствования) կրում են բնական կամ տարերային բնույթ, հետևապես զուրկ են այն նախադիտավորությունից (преднамеренность), վորը այդպես հատուկ և նախորդ կարգի փոխառություններին, իբրև յերկրորդական, պատահական և բնոհանրապես հետագա յերևույթ *:

Վերջերս Մոսկւ, կարծես թե, նախնջում և յուր պաշտպանած «խաչավորման» սկզբունքի բացառիկ ներգործականությունից, գտնելով, վոր «գերադասանակ» **, .

Լեզուների բնական խաչավորումը, ինչպես հայտնի յի, սկսվում և շարահյուսություն և բառերի («Լեզուիկայի») խառնվելով, վորը հետո տարածվում և բառակազմույթի ու ձևարանության վրա:

* * *

Մենք աշխատեցինք ամփոփ կերպով նկարագրել առաջադրված «Հայերենական լեզվաբանությունն ու տեսությունը» վերաբերող բոլոր խնդիրները, տալով հոգովածիս առաջին մասում այդ լեզվաբանության պատմությունը, բնագավառը՝ լեզուները՝ և մասամբ հարեթականների պատմական դերը, իսկ յերկրորդ մասում՝ նրա այսպես սասած տեսությունը («փիլիսոփայությունը») իրեն պոտտողենիայով, տիպոլոգիայով, սեմանտիկայով, և այլն:

Արդ՝ Բնչ դիտական յկրակացությունների յենք հանգում բնոհանրապես հարեթական լեզվաբանության տվյալներով:

Նախ այն, վոր մեր առաջ բացվում և մի նոր միասնական լեզվաշխարհ, լեզվաբանանիք, վորի տարածման շրջանագծում և ներքին բաղկացուցիչ մասերի փոխհարաբերությունն ու բովանդակությունը պես չի կարելի, մեր կարծիքով, վերջնականապես պարզված համարել:

Յերկրորդ, մարդկային լեզվի ծագման վերաբերյալ նոր լուսարանություն և տրվում, յերբ «նախալեզվի» (հնգեվրոպագետների իմաստով) փոխարեն բնոհանրում և միասնական տիպոլոգիայով և սեմանտիկայով մի նախալեզվային կացություն՝ յուր բազմաթիվ սաղմնալեզուներով, վորոնք ձգտում են միավորման. և «լեզվաբանանիքները» կամ ալիլի ճիշտ «նախալեզուները» հետագայի անկատար ձեռքբերումներն են, հաջողություններն են:

* Տե՛ս А. Генко, к вопросу о языковом скрещении (ЯС, II, 1923, № 122), ուր մասնավորապես տնողվում և հունական քաղաքների հոգնակի վերջնայր («Թէքաի, Աթէնաի, Ամուկաի Մուկենաի...»), իբրեւ պեխագայան հարեթականների մի ժառանգություն. Հմմտ., մեր կարծիքով, նման հարեթական հոգնակին (-նի) հետեւյալ բառերի մեջ— Գարնի, Արզնի, Պարնի, Պոզնի, Բջնի, Մուզնի...

** Լենինգրադի «Արեւելյան ժողովածու»-ի մեջ, 1926 թվի:

Զորքերը, հայտնաբերվում և նախնական լեզվային հոգեբանություն, լեզվական մտածելակերպ, յերբ լեզուն, լինելով հասարակության ստեղծագործություն, յուր սեմանտիկայի և խոսքի ձևաբանության մեջ, իսկ արտացոլում և մարդկային հասարակարգի յերևույթները, և յերբ բառաստեղծման համար հաջորդում են տիեզերական-տարերային, էթնիկական-տոտեմական, գասակարգային և պատմական դարաշրջանները:

Վեցերորդ. հարեթական լեզվագիտությունը յուր հետազոտությունների արդյունքով հասնում է նյութական կուլտուրայի ամենահնագույն դարաշրջանների «նեոլիթից ու պալեոլիթից ել տասնյակ հազար տարիներ այն կողմը» (Нов. Воет.), մեզ հասցնում է մինչև արտասոնական լեզվի ստղծային կացությունը, մինչև պալեոլիթի իսկ ծագումը՝ ըստ նյութական կուլտուրայի զարգացման եպոխաների, մինչև ցեղային կյանքի իսկ ծագումը» (տես ЯС. III, 1925, № 52) *։ Յեվ այդ նախնական ետապները արտա

«Следовательно, тогда не могло быть, разумеется, и яфетических племен, вообще яфетидов или праяфетидов. Человечество жило еще в условиях стихийной общности космоса и людей того периода, а также по центральному значению, какое небо-вода имеет в семантике человеческой речи, приходится отличить термином ураниды» (ib. *հջ 52*): «Կոսմոս»-ի ազդեցությունը իրեն տեկառնիկ հեղաշրջումներով Մառը տեսնում է, մասնավորապես, ավանդաբար մնացած այն առասպելների մեջ, վրո՞նքը ցրհեղեղի, աշտարակաշինության չեղ այլ նկարագրություն արտացոլում են Միջերկրականի վերջին ֆորմացիաների պրոցեսսը (ib). Ըստ իս, հույն, «Σελήνη» շառը իրեն «կառուցվածք» իմաստով = մեր «կազմ» բառին, իբրեւ հարեթականություն (Σελήνη նայել նշանակում է «արդուգարդ» չեւ «տիլեգերը»): Իբրեւ «տիլեգերական» արտացոլույթ հանդիսանում է, ըստ Մառի, նայել միջնադարյան ռոման «Տրիստան չեւ Իսուզան», վերը, ինչպես ինքն է ասում՝ «оказался наследием эпоса, сродного с гоме-ровским, и вместе с ним наследием доисторического сказания тогда, конечно, не о влюбленных, а о космических героях, боге и богине любви, солнце-Тристане, в воде-Исольде, доисторической Афродите Ουρανίε в Средиземноморье эрусской Туранн, в Передней Азии Иштари» (Нов. Вост., № 5, *հջ 305*). այդ Իսուզա, Իշտար չեւ Տուրան անունները մի հարեթա- կան արմատից են (ib):

ցուում են վոչ միայն սեմանտիկան ու մասամբ ձևաբանությունը, այլև, կարծես թե, այն հնչյունները, վորոնք լինելով ատավիզմներ կամ հին մնացորդներ, ինչպես արևադարձային, լեզվաբանական, սովանական և այլ լեզուներումն է, անջրպետ են հանդիսացել՝ իրենց դեռ լիովին չզտված գրությունը՝ մարդ-կենդանու նման հնչյունա-ազվային արտադրությունների և «կուլտուրական» մարդու հնչյունների մեջ և սահմանափակել են «նախալեզվական կացություն» պրիմիտիվ բառապաշարը:

Հարեթաբանությունն նվիրված մեր այս ընդհանուր նկարագրությունն ու յեզրակացությունը, լինելով, մեր կարծիքով, միանգամայն որոշակիով, պարփակում և յուր մեջ այդ նոր լեզվաբանության այն դրությունը, այն պատկերը, վոր գոյություն է ունեցել մինչև այս վերջին տարիները:

Սակայն, ցայժմ լինչ թերություններ և նա հայտնաբերել:

Ցավոք պիտի արձանագրել, վոր մեր ուրվագծած հոյակապ այդ կառուցվածքը, լինելով մի անձի գրեթե քառասուն տարվա յեռանդագին ու աննախընթաց աշխատանքի արգասիք, տակավին հունի յուր ամուր հիմքն ու պատվանդանը, այն է՝ «Համեմատական քերականությունը»:

Բացի այդ, նորանոր փոփոխությունները, վոր մասնակի ձևով հաճախ Մաուր մտցնում է, շատ յերերուն ու խախուռ վիճակ են ստեղծում, սպառնալով ամբողջ կառուցվածքի գոյությունը, ինչպես ուղղորդիչական և տյուրկական լեզուների ազդակցության նոր խնդիրը, վորը Մաուր ընդունում է հարեթականի հանդեպ, կամ ինչպես «խաչաժորման» սկզբունքի թուլացումը և այլն և այլն:

Իսկ ամենամեծ թերությունը, մեր կարծիքով, այդ հաստատ հնչյունաբանական որոնքների բացակայությունն է, վոր հաճախ տեղի յե տալիս բունադրուսիկ հնչյունաբանության: Ընդհատ է, հունձը առատ է, մշակները սակավ, և այդ տեսակետից է, թերևս, վոր Մաուր իր «Հարեթական թերիայի մասին» (НОВ. ВОСТ., № 5) աշխատանքում դիմում է հնդեվրոպագիտության «կիրթ տեխնիկայի» գործակցությանը և ողնությանը, տարակուսելով, սակայն այդ բանի հաջողության մեջ: Մյուս կողմից էլ, անընդունելի յե, յերը անտեսվում է մի վորևէ լեզվի սեփական պատմությունը, և նրա բառը առանց վերականգնված հին ձևի համեմատվում է նման ձևի մի այլ լեզվի բառի հետ *:

* Որինակ, չի կարելի մի փրանսիական բառ համեմատել մի հայերեն բառի հետ առանց դրանց հին ձևերը վերականգնելու. այսինքն, յեթե դիցուք ֆր. mère կամ père բառերը համեմատում ենք «մէր, հէր» բառերի հետ, իհարկե այդ պետք է անել դրանց սկզբնաձևերի միջոցով: Մաուր, որինակ, համագրում է «եղրայր» յեվ վրացերեն «մեգորարի» («բարեկամ») բառերը, անտեսելով «եղրայր»-ի «դ», «դր», յեվ «այ» պատմությունը նախ հայերենում. կամ «կարկաչ» բառից արմատորեն հանում է «կար» մասը, իբրեւ առանձին բառ (=ջուր), վորովհետև համեմատելի ամերիկայում էր նշանակում և «ջուր», այնինչ «կարկաչ» կրկնակ բառ և «բրչալ» ձևվի տարբերակը, իսկ կրկնավոր բառերի առաջին մասի վերջին բաղաձայնը հաճախ

Իսկ այս բոլորի զիմաց՝ վորքան են անաղարտ ու կատարյալ տիրող լեզվաբանական գաղափարները իրենց տեխնիկական մշակվածությունը հանդերձ: Չունեն բացեր և զրանք, թեկուզ և այլ կարգի: Արդյոք, չենք տեսնում վորոշ իբնամիտի և ընդարմացած վիճակ, յերբ այդ գաղափարները սահմանափակվում են իրենց նյութի նեղ շրջանակներում, խորանալով միայն ուրույն պատմա-կուլտուրական բնագավառներում, և հայանարհերում են նախկին սխոլաստիկական մտայնության վերապրումներ. ընդունվեց, արդյոք, պատմա-բնագիտական մեթոդը:

Գերիշխող հնդեվրոպալիտությունը, կարծես թե, ընդգրկեց նախորդ զարաշխանների աշխարհայեցողությունը, յերբ կրոնագիտական հիմունքներով առաջացած ցեղակցական բաժանումը նա փոխարինում և լեզվագիտական բաժանումով, վերցնելով իր ընտրյալ ռասան և խորանալով նրա անջատ ուսումնասիրության մեջ: Թեպետ այդ գաղափարը իր տեխնիկական կիրթ«прием»-ներով ու միջոցներով մեծ պատմական ծառայություն և մատուցել՝ մարդկային լեզվի հիշատակարանների պահպանումով և զրանց հին թանգարանական ձևի դասակարգումով, ինչպես, դիցուք, պապական իշխանության ներկայացուցիչներն ևլ ունեն հին յեվրոպական քաղաքակրթության հանդեպ անհամար ծառայություններ. այնուամենայնիվ այդ գաղափարը մեծող բուրժուական հասարակության սեփականությունը պիտի համարել: Я прекрасно знаю, ասում և Մառը, какие благородные самоотверженные работники — лингвисты-индоевропейцы, между тем сама индоевропейская лингвистика есть плоть от плоти, кровь от крови отживающей буржуазной общественности, построенной на угнетении европейскими народами народов Востока их угнетенной колониальной политикой. Хотите конкретного доказательства? Вот вам факт: посмотрите, как много сделано всеми европейскими нациями по санскриту, потому что он сроден с европейскими, потому что он письменен, деревне-письменен, потому что он великокультурен и выявляет, казалось, великое культурное начало европейских языков,—как много сделано в смысле его изучения, сравнительно хотя-бы с дравидскими языками все той же Индии (Нов. Вост., № 5, кр 303): Մառը այդ գաղափարի ծագումը 70—80 թվականներին և հակադրեա Գերմանիայում չի համարում մի պատահականություն, այլ կապում և այդ յերկրի այդ ժամանակվա ազգային վերելքի հետ (Տիփ. Կաւ., կրք 17—18). մեր կռիւից աղերացնենք նաեւ, վոր գերմանացիք մինչև հիմա ևլ զեւ համատրեւն շարունակում են այդ լեզվաբանութիւնը «հնդեվրոպանական», հակառակ գիտությունիւն տվյալներին:

և դառնում «ը» (սմմտ-բարբաջիւմ — բաջադիւմ, բարբոբիւմ — բոջ, խարխալիւմ... մարմանդ, գարգանդ, հարնանդ, արտունդ, մրմունդ, մարմաջ...) կամ վրաց «մարջիկնի» (=աջ) յեւ «մարջիկնի» (=ծախ) բառերից հանել ներկա «մար—» կոտոր, վորք տասնյակ հազար տարիներ անփոփոխ մնալով, նշանակել և «ծնոր», համեմատ ամերիկյան նման բառի, այնինչ վրացերենում «ը» հանախ և հնչարանորեն զարգանում, իրրեւ «նալկրվածք, իսկ «մ—(մա)» կարող ևլ լինել սովորական նախածանց:

Սեմական լեզվաշխարհն էլ՝ իր լեզուների շատ մոտ ազգակցությամբ և հակամերթ կրոնական հասարակությունների բաժանվածությամբ՝ չունեցավ տակավին տարաշխարհ (черезполюсный) լեզվական կապակցություններն ուսումնասիրողներ, մինչդեռ սեմա-քամյան ազգակցության փոխհարաբերություններն անգամ, վերոնք հիմնականում ընդունված են սեմագետներից, մինչև հիմա էլ շարունակում են մնալ անհետաքննած մինչև իրենց խորքերը:



Իսկ թյուրքագիտությունը, լինելով լայնատարած շրջանների տեր և շփվելով իր նյութերով այլ տիպոլոգիական լեզուների հետ, — կան և խաչավորված ձևեր, — շարունակում է կամ ինքնամիտք վիճակ ապրել, կամ շատ-շատ հետքերովում և կցական լեզվական տիպի մնացորդներով, ինչպես ոգրոֆինական լեզուներն են, թեպետ այդ խնդրում էլ ակտիվությունը ավելի շուտ ոգրոֆինագետներին և պատկանում, և նրանց շահագրգռում և «պրիմիտիվ» լեզուներ, ինչպես մոնղոլականն է. վրձանք աչքերը ուղղել էյին և հայերենին, ուր ընդհանուր դժերն ու մանավանդ բառերը ցանկանում են համարել իրրև հատկանք անհիշատակելի ժամանակներից մնացած մի տաճկական արժի: (Ид. Кав., էջք 21—22):

Հարեթարանությունը, իբրև նոր ուսմունք, իր խոշորագույն նվաճումներով և արժանիքներով հանդերձ ունեցավ և կունենա անշուշտ իր սխալները և թերությունները, վսրը մասամբ և բնութագրվեց մեր կողմից: Յեվ այդ շատ բնական է, քանի վոր այդ հսկա նյութի բոլոր կողմերի գեթ սխեմատիկ տեսարանումը մի մարդու կարողությունից վեր է, վորքան էլ նա լինի տաղանդավոր ու աշխատունակ. էլ չենք խոսում նրա մասին, վոր հարեթական լեզուները կամ իբրև մեռած քիչ հիշատակագրություն են թողել և բնավ չթողել, կամ իբրև կենդանի լեզուներ յերբեք չեն ուսումնասիրվել և մինչև իսկ զրի առնվել և կամ ուսումնասիրվել են շատ քիչ, այն էլ վոչ գիտականորեն: Հարեթարանության տեսական մասի «անկատարությունը» շեշտվել է և իրեն Մաուր կողմից, ինչպես վոր մենք մատնանշել ենք («пока незаконченная разработанность теории», Нов. Вост., № 5, էջ 314): Չմոռանաք հիշատակել, վոր, որինակ, հնդեվրոպագիտություն իսկ իր հազարավոր սպասավորներով և հարյուրավոր համալսարանական ամբիոններով հազիվ կարողացավ մի ամբողջ գարում հասնել իր վերջակի ձևակերպմանը, այն էլ, թերևս, կարոտ շակումների:

Հակառակ ընդհանուր գույզ վերաբերմունքի, հատկապես Յեվրոպայում, Մաուր ուսմունքը ուներ և ունի իր հիմնավորման և տարածման համար միանգամայն նպաստավոր միջավայր ի դեմս Ռուսաստանի բարձրագույն գիտական հիմնարկների և վերջերս, մասամբ, և ուսու գիտնականների (Մեղչանինով, Բորոգդին, Կուլյարևսկի, Գենկու...): Հատկապես պետք է նիշել «Հարեթական Խնամախոստի» զերը, վորը հիմնված է 1922 թվին Գիտության Ընկերության կից, կազմակերպում և գիտական զեկուցումներ և ուսումնասիրություններ, ունի իր տարեկան պարբերականը՝ «Հարեթական Ժողովածու» («Ифет. Сборник») և շատեր — վարիչ, խորհրդի 2 անգամ, վեց

առաջին կարգի աշխատակիցներ, յերեք՝ յերկրորդ կարգի, 15 վաշ շատա-
յին աշխատակիցներ, 4 խորհրդատուներ և վաշ շատաային անդամներ՝ պրոֆ.
R. M. Azkue (Իսպանիա), F. A. Braun (Գերմանիա) և Oliver Wardrop (Ան-
գլիա): «Հաբեթական Ինստիտուտին» իբրև ժառանգություն մնացել են նաև
«Тексты и размышления по кавказской филологии» (նախկին՝ «Т. и Р. по
арм. -- груз. фил.») և «Материалы по ифетическому языкознанию». արդեն
հիշատակվել և Վալայցիի «Laphetische Studien sur Sprache und Kultur
Eurasiens»: Այդպիսով՝ «Հաբ. Ինստիտուտը» դարձել և հաբեթաբանության,
կարելի չե ասել, դարբնոցը, խմբելով իր շուրջը և վարոշ թվով աշխատա-
կիցներ, թեպետ այս րոտորը տակավին կառչած և մնում գլխավորապես
Մատի անձնական ջանքերին:

Լինելով կլանիչ իր նորությունը ու ներքին թափով, իր արմատական
և մասամբ հակա-ավանդական մեթոդությունով, համընթաց գտնվելով հա-
կապես մասերիալ կուլտուրայի հայանուններին, նրա Միջերկրականի կուլ-
տուրայի պրոբլեմի լուծմանը և այլն, ընդգրկելով ընդհանրապես լայն
հեռանկարներ պատմա-կուլտուրական տեսակետից (հնագիտական, ազգա-
բանական, հասարակագիտական, կրոնագիտական և այլն), — հաբեթաբանու-
թյունը կատանալ նաև, մենք չենք կասկածում, իր տեխնիկական վերջնա-
կան շտկումը, ձևակերպումը: Հուներ նիշված և, գրեթե և պարունակելին,
ժամանակին և աշխատանքին և թողնված նրա կոնսարուկտիվ մասերը, նրա
վերջնական սահմանադրումը:



ԳԻՆՆ Ե 40 ԿՈՊ.

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0074233

A $\frac{\text{III}}{5234}$